# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

26 մարտի 2021 թվականի N 12-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26 -Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 26-ի թիվ 3 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 26-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 62-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 28-ի N 18-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2021 թվականի բյուջեով նախատեսված «Հուղարկավորության նպաստներ բյուջեից» 4726 և «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածներից, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի բնակիչներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին /զեկուցող

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի, Աշոցք բնակավայրի 5-րդ փողոցի N 15/4 հասցեի 51,7 (հիսունմեկ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը ավտոտնակի պահպանման և սպասարկման տարածքի ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական սահմանում գտնվող /բնակավայր Աշոցք/, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի օգոստոսի 23-ի օրինական ուժի մեջ մտած վճռով /Քաղաքացիական գործ թիվ ՇԴ1/0328/02/19/ քաղաքացի Վարդան Արամայիսի Ղազարյանի սեփականությունը ճանաչված կիսակառույց շինության /Աշոցքի զինկոմիսարիատի նախկին կիսավարտ շինություն/ պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-015-0020-0028 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0.093649 հեկտար հողամասին նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

**Կողմ (6)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Վ. ԱԲՐԵՅԱՆ
Մ. ԵՐԱՆՈՍՅԱՆ
Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Հ. ՄԵԼԻՔՅԱՆ
Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2021 թվականի մարտի 26
գյուղ Աշոցք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2021 թվականի N 13- Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 62-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 62-Ն որոշման մեջ կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները.

1) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման» հատված 3-ում՝

ա. հոդված 5112, 5112 տողում «6000.0» թիվը փոխարինել «5850.0» թվով,

բ. հոդված 5113, 5113 տողում «120410.8» թիվը փոխարինել «111410.8» թվով,

գ. հոդված 5129, 5123 տողում «10000.0» թիվը փոխարինել «10400.0» թվով,

դ. հոդված 5134, 5134 տողում «1998.1» թիվը փոխարինել «10748.1» թվով:

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝***

**Կողմ (6)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Վ. ԱԲՐԵՅԱՆ

Մ. ԵՐԱՆՈՍՅԱՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2021 թվականի մարտի 26
գյուղ Աշոցք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մարտի 2021 թվականի N 14–Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 18-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 28-ի «Գյուղատնտեսության և կոմունալ ծառայությունների ոլորտներում համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 18-Ն որոշման մեջ կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ լրացումները.

1) որոշման 1-ին մասում լրացնել <<9)>> կետ հետևյալ բովանդակությամբ.

Շարքացանի 1 ժամ աշխատանքի համար (վառելանյութը տրամադրում է ծառայությունից օգտվողը)՝ 5000 (հինգ հազար) դրամ,

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝***

| | **Կողմ (6)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|---|
| Վ. ԱԲՐԵՅԱՆ | | | |
| Մ. ԵՐԱՆՈՍՅԱՆ | | | |

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2021 թվականի մարտի 26

գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մարտի 2021 թվականի N 15-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ» 4726 ԵՎ «ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ» 4729 ՀՈԴՎԱԾՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 64-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 12-րդ, 14-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2021 թվականի բյուջեով նախատեսված «Հուղարկավորության նպաստներ բյուջեից» 4726 և «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածներից, /բաժին 10, խումբ 4, դաս 1, տող 3040 «Ընտանիքի անդամներ և զավակներ»/ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի բնակիչներին տրամադրել միանվագ դրամական օգնություն՝ 370000 /երեք հարյուր յոթանասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ ընդհանուր գումարով, համաձայն հավելվածի:

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝***

| Կողմ (6) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

Վ. ԱԲՐԵՅԱՆ

Մ. ԵՐԱՆՈՍՅԱՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2021 թվականի մարտի 26
գյուղ Աշոցք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու
2021 թվականի մարտի 26 -ի թիվ 15 -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

| | Բնակավայրի անվանումը | Ազգանուն, անուն | Գումարը /Հայաստանի Հանրապետության դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Մեծ Սեպասար | Պետանյան Հրազդան | 35000 |
| 2 | Բավրա | Իվանյան Մեխակ | 300000 |
| 3 | Բավրա | Իվանյան Աշոտիկ | 35000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 370000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ **ashotsq.shirak@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

26 մարտի 2021 թվականի N 16-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով, որ 2021 թվականի ընթացքում համայնքապետարանի կողմից ձեռք է բերվել գույք ու գույքագրման փաստաթղթերում կատարվել համապատասխան փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է.***
Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի ։

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝***

**Կողմ (6)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Վ. ԱԲՐԵՅԱՆ
Մ. ԵՐԱՆՈՍՅԱՆ
Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Հ. ՄԵԼԻՔՅԱՆ
Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2021 թվականի մարտի 26
գյուղ Աշոցք

Հավելված
Հայաստանի Հանրապետություն
Շիրակի մարզի Աշոցք համայնքի
ավագանու 2021 թվականի
մարտի 26-ի թիվ 16- Ա որոշման

## Գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները

| Հ/Հ | Գույքի անվանումը | Գինը | Քանակը | Գումարը | Օգտագործողը | Սեփ_տ | Գտնվելու վ | Ձեռքբերման | Վիճակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Խոտի մամլիչ (պրես) | 5,240,000 | 1 | 5,240,000 | համայնք | սեփ | Աշոցք | 2020թ. | |
| 2 | Համակարգչի կոմպլեկտ /պրոցեսոր՝ intel Celeron G4930, ստեղնաշար, մկնիկ | 138635 | 2 | 277270 | համայնք | սեփ. | Աշոցք | 2021թ. | |
| 3 | Մոնիտոր՝ Philips 185 193V5L | 50000 | 1 | 50000 | համայնք | սեփ. | Աշոցք | 2021թ. | |
| 4 | Բարձրախոս՝ Crown Micro 2.0 | 7000 | 1 | 7000 | համայնք | սեփ. | Աշոցք | 2021թ. | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2021 թվականի N 17- Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՑՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 15/4 ՀԱՍՑԵԻ 51,7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 5-րդ փողոց, թիվ 15/1 հասցեի 62 (վաթսուներկու) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտնակը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Վլադիկ Սիսակի Մկրտչյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 19112013-08-0034 վկայական):

Քաղաքացի Վլադիկ Սիսակի Մկրտչյան դիմել է Աշոցք համայնքի ղեկավարին՝ իրեն պատկանող Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 5-րդ փողոց, թիվ 15/1 հասցեի 62 (վաթսուներկու) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտնակին հարակից Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 5-րդ փողոց, N 15/4 հասցեի 51,7 (հիսունմեկ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 09032021-08-0056) ավտոտնակի պահպանման ու սպասարկման տարածքի ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ հողամասը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին մասի 1-ին և 2-րդ, ենթակետերի, 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի, հնարավոր չէ օտարել աճուրդով որպես առանձին գույքային միավոր, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Վլադիկ Սիսակի Մկրտչյանի 2021 թվականի մարտի 19-ի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեգրված դիմումը Աշոցք համայնքի ավագանին **որոշում է**

1. Քաղաքացի Վլադիկ Սիսակի Մկրտչյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 5-րդ փողոց, թիվ 15/1 հասցեի 62 (վաթսուներկու) քառակուսի մետր մակերեսով հողամասով

ավտոտնակին հարակից Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 5-րդ փողոց, թիվ 15/4 հասցեի համայնքապատկան կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 51,7 (հիսունմեկ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ավտոտնակի պահպանման և սպասարկման տարածքի ընդլայնման նպատակով:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 142 (մեկ հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1,0 /մեկ/ քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 51.7 (հիսունմեկ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի վաճառքի գինը կազմում է՝ 7340 յոթ հազար երեք հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝***

| | **Կողմ (6)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|---|
| Վ. ԱԲՐԵՅԱՆ | | | |
| Մ. ԵՐԱՆՈՍՅԱՆ | | | |
| Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | |
| Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ | | | |
| Հ. ՄԵԼԻՔՅԱՆ | | | |
| Մ. ՍԱՐԳՍՅԱՆ | | | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2021 թվականի մարտի 26
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մարտի 2021 թվականի N 18 –Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԱՇՈՑՔ/, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ ԹԻՎ ՇԴ1/0328/02/19/ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅԱՆ /ԱՇՈՑՔԻ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻՏԱՏԻ ՆԱԽԿԻՆ ԿԻՍԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ/ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-015-0020-0028 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.093649 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի N 757-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված «Հասարակական նպատակային նշանակության շենքերի, շինությունների դասակարգման ցանկի» 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի օգոստոսի 23-ի օրինական ուժի մեջ մտած վճիռը /Քաղաքացիական գործ թիվ ՇԴ1/0328/02/19/, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք գյուղի 1-ին փողոց, թիվ 11 հասցեում գտնվող 08-015-0020-0028 կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա կիսակառույց շինությունը /Աշոցքի զինկոմիսարիտատի նախկին կիսավարտ շինություն/ ճանաչվել է քաղաքացի Վարդան Արամայիսի Ղազարյանի սեփականությունը, հաշվի առնելով քաղաքացու 2021 թվականի մարտի 19-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմանում գտնվող /բնակավայր Աշոցք/, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի օգոստոսի 23-ի օրինական ուժի մեջ մտած վճռով /Քաղաքացիական գործ թիվ ՇԴ1/0328/02/19/ քաղաքացի Վարդան Արամայիսի

Ղազարյանի սեփականությունը ճանաչված մարզ Շիրակ Աշոցք համայնք գյուղ Աշոցք 1-ին փողոց, թիվ 11 հասցեում գտնվող, 08-015-0020-0028 կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա կիսակառույց շինության պահպանման ու սպասարկման համար նախատեսված **0.093649** հեկտար մակերեսով հողամասը, որից **0.037608** հեկտարը հանդիսանում է պետական սեփականության հատուկ նշանակության հող, իսկ մնացած **0.056041** հեկտարը համայնքային սեփականության արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակություն, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հող, փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա, հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն, այդ հողամասում առկա կիսակառույց շինությունն ավարտելու, այն որպես հասարակական նպատակային նշանակության բնակչության սպասարկման օբյեկտ /ատամնաբուժարան, դեղատուն/ օգտագործելու և հողի նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար՝ Կարեն Մանուկյանին.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի հողերի օտագործման ժամանակավոր սխեմայում սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմել համապատասխան հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝***

**Կողմ (6)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Վ. ԱԲՐԵՅԱՆ
Մ. ԵՐԱՆՈՍՅԱՆ
Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Հ. ՄԵԼԻՔՅԱՆ
Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2021 թվականի մարտի 26
գյուղ Աշոցք